
ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՐԵՄԻԱ ՄԵՂԵՑՈՒ
«ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑԻ» ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՇՈՒՐՁ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցում»¹ կան այնպիսի բառեր, որոնք բառաքննական և ստուգաբանական հետազոտության տեսանկյունից որոշակի դժվարություններ են հարուցում: Հ. Աճառյանը ժամանակին նման բառերը համարել է «կասկածելի և անստույգ»՝ նշելով հետևյալը. «Մանրամասն քննելուց հետո աշխատությունը, տեսա, որ մեծագույն մասամբ վրիպակների մի հավաքածու է այն», այլն՝ «պետք է շատ զգուշությամբ վերաբերվիլ սույն բառագրքի հետ և նրա հիշած ձևերը իբր ճշմարտություն չընդունիլ: Այսպես արի ես էլ և բառերը ուշադիր քննելուց հետո, եթե կեղծ չգտա, անցկացրի իմ բառարանի մեջ, այն էլ միշտ իբր կասկածելի և անստույգ»²:

Այս գնահատությունը, մեղմ ասած, բավականին մերժողական է, թեև այդուհանդերձ «Բառգիրք հայոցի» բառամթերքը գրեթե ամբողջովին Հ. Աճառյանն անցկացնում է իր բառարանի մեջ, միշտ նշելով՝ «գիտե միայն Բառ. երեմ. (=Բառգիրք Երեմիայի – Վ. Հ.)» կամ «ունի միայն Բառ. երեմ.» և այլն:

Աճառյանի նման վերաբերմունքի գնահատությունը լավագույնս տվել է Գ. Ջահուկյանը. «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը: Այս տեսակետից Հ. Ամալյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները» (Երևան, 1974) աշխատության և ապա «Բառգիրք հայոցի» քննական բնագրի հրատարակության (Երևան, 1975) նշանակությունը շատ կարևոր է: Կարելի է ասել, որ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» մեծապես շահած կլինի, եթե նման աշխատանք կատարված լիներ նախքան այդ բառարանի հրատարակումը. շատ բառեր կճշգրտվեին և կստանային ավելի հավաստի մեկնաբանություն»³:

Եվ իրոք, ինչպես ցույց տվեցին հետագա համապատասխան աշխատանքները, «Բառգիրք հայոցի» կարևորությունն ավելի էական է դառնում հայոց լեզվի բառապաշարի ամբողջական վերհանման ու նկարագրության համար. ճշգրտվում և հավաստի մեկնաբանություն են ստանում մի քանի տասնյակից ավելի բառեր ու բառաձևեր:

¹ Բառգիրք հայոց, արարեալ ի Սուրբ Էջմիածին Երեմիայի վարդապետ է ի յԱլիկոնայ, 1698, 344 էջ, 2-րդ տպ.՝ Կ. Պոլիս, 1828, 576 էջ:

² Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 10:

³ Գ. Ջահուկյան. Ստուգաբանություններ. – ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1976, – 12, էջ 41:

«Բառգիրք հայոցը», լինելով բացատրական բառարան, ինչ խոսք, XVII դ. հայ բառարանագրության ամենակարևոր երևույթն է: Այն ամփոփում է նախկինում երևան եկած հայերեն գրեթե բոլոր ձեռագիր բառարանների նյութը՝ մի քանի հազարի հասնող բառաքանակի սահմաններում:

Անկախ նրա ծավալի, բացատրական մասի, տպագրական որակի և այլ հանգամանքների առնչությամբ տեղ գտած թերացումներից, այն ժամանակին բարձր են գնահատել, օրինակ, Մխիթարյան միաբանության հայրերը, ամենից առաջ՝ Մխիթար արքա Սեբաստացին, երբ ձեռնամուխ է եղել իր ծավալով աննախադեպ, բառարանագրական մշակման տեսանկյունից համապարփակ, ընդ որում ժամանակի եվրոպական բառարանագրության չափանիշներով կազմված «Բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության ստեղծմանը⁴:

Այնուհետև բառարանի նյութին տարբեր առիթներով անդրադարձել են Գ. Ղափանցյանը և Է. Ադայանը⁵:

Այդ հետաքրքրությունը մեծացավ հատկապես հետագայում, երբ լույս տեսավ «Բառգիրք հայոցի» քննական բնագիրը: Այդ գործում մեծ ներդրում ունի Հ. Ամալյանը: Անվանի լեզվաբան-ձեռագրագետը նախ գրեց հայ բառարանագրական հուշարձանների պատմությանը նվիրված հատուկ ուսումնասիրություն, որում անդրադարձավ նաև հիշյալ բառարանի գիտական վերլուծությանն ու գնահատությանը, այնուհետև կազմեց վերջինիս քննական բնագիրը՝ անհրաժեշտ ծանոթագրություններով ու ընդարձակ առաջաբանով, որը մեծ ձեռքբերում է այդ ասպարեզում⁶:

«Բառգիրք հայոցի» զգալի թվով բառեր ուշադրության առարկա են եղել Գ. Ջահուկյանի «Ստուգաբանություններ» վերնագրով հոդվածներում, այլև հետագա մենագրություններում⁷: Լ. Հովհաննիսյանը քննության է առել «Բառգիրք հայոցի» անհայտ ծագման երկու տասնյակից ավելի բառեր⁸: Բառարանի մեկ-երկու բառերի անդրադարձել է նաև Պ. Բեդիրյանը⁹:

⁴ Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1749-1769:

⁵ Г. А. Капанцян. Общие элементы между хеттским и армянским языками. Эриван, 1936; о нем же. Историко-лингвистические работы: К начальной истории армян. Древняя Малая Азия. Ереван, 1956, с. 329 – 408. Ն ու յ ն ի՝ Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961: Է. Ա դ ա յ ա ն. Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974:

⁶ Հ. Ա մ ա լ յ ա ն. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI-XVIII դդ.), Երևան, 1972, Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Երևան, 1975, տե՛ս նաև ն ու յ ն ի՝ Հայ միջնադարյան բառարանագրությունը. Երևան, 2007:

⁷ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ստուգաբանություններ.– ՊԲՀ, 1965, № 1, էջ 255, 1991, № 2, էջ 36-44, 1996, № 1-2, էջ 39-46, ԼՀԳ, 1976, № 2, էջ 41-51, 1979, № 3, էջ 23-34, ն ու յ ն ի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, ն ու յ ն ի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:

⁸ Լ. Հ ո Վ հ ա ն ի ս յ ա ն. Բառաքննական նկատառումներ «Բառգիրք հայոց»-ի մեջ տեղ գտած մի քանի բառերի վերաբերյալ.– ԼՀԳ, 2000, № 2, էջ 213-221:

⁹ Պ. Բ ե դ ի թ յ ա ն. Ստուգաբանական վերլուծություններ.– ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, №7, էջ 40, ն ու յ ն ի՝ Մի քանի ստուգաբանություններ.– ՊԲՀ, 1962, №1, էջ 144:

Բառարանում դեռևս կան բառեր, որոնք կարոտ են նոր լուսարանման: Ստորև անդրադառնում ենք այդ կարգի բառերից մի քանիսին:

1. Աղանդումն «խելագարումն» («Բառգիրք», 1975, էջ 12), իսկ ըստ Աճառյանի՝ աղթանդումն՝ նշելով, որ «գիտե միայն Բառ. երեմ., էջ 11»¹⁰:

2. Ամայյանը գտնում է, որ ճիշտը աղանդումն ձևն է, և քննական բնագրում իբրև գլխաբառ դրված է աղանդումն, իսկ վերջինիս տողատակին՝ աղթանդումն, աղադումն (աղամովթ-ից հետո)՝ որպես ձեռագրական տարբերակ («Բառգիրք», 1975, էջ 346): Իսկ հետագայում, հավանաբար հետևելով Աճառյանին, նա գլխաբառ է դնում նախկինում սխալ համարվածը՝ տալով հետևյալ ձևակերպումը. «Աղթանդումն. խելագարումն: Ձեռագրերի մի մասը չունի այս բառահոդվածը: Մյուս ձեռագրերը (Մաշտոցյան Մատենադարան, №№5596, 8198, 3937 և այլն), որ հնագույն գրչագրեր են, ունեն աղանդումն: Միայն №5925-ում կա՝ «Աղանդաւոր. խելագարումն»: Ուրեմն գլխաբառը պետք է լինի աղանդումն»¹¹: Ստացվում է, որ բառի ճիշտ՝ վերականգնելի ձևն է աղանդումն, որ եղել է նախկինում՝ քննական բնագրում, իսկ ավելի ուշ դարձյալ գլխաբառ է դրվում սխալ ձևը:

Հավանաբար, գործ ունենք աղանդումն «խելագարություն, խելագարվելը» բառի հետ: Եթե ընդունենք, որ աղանդումն բառի աղանդ հիմքն, իր հերթին, բառադարձ է աղ- արմատով և -անդ ածանցով, ապա կարելի է կարծել, որ արմատը այլ բան չէ, քան ալ/ալլ արմատի մի տարբերակը: Այն լծորդ է այլ արմատին, որն ի դեպ՝ ավելի հին է, քան ալլ արմատը: Իսկ վերջինս ծագում է հ.-ե. * alyo- (*ailo-) ձևից. հմմտ. հուն. άλλος «այլ, ուրիշ», լատ. alius «նույնը», գոթ. aljis «նույնը», հիոյ. aile «նույնը», կիմր. ail «նույնը» և այլն¹²:

2. Աղիփաստու «հոգաբարձու», այլև ավիփաստու («Բառգիրք», 1975, էջ 12, 43, 346, 352): Աճառյանը նշում է, որ ունի միայն Երեմիայի բառարանը: Ամայյանը հետագայում այլևս չի անդրադառնում դրան:

Բառը, կարծում ենք, փոխառություն է հուն. (դոր.) άλιβατος, այլև ήλιβατος (<ήλι-βάτος «դարձանցանելի, հեշտ հաղթահարելի»), «բարձր, գառիվեր. վեր բարձրացած՝ վերամբարձ. բարձրուղեղ. խորը, անհատակ» ձևից¹³: Ըստ Ջահուկյանի՝ «փոխառություն՝ հուն. άλίπητος» ձևից, որը հնչունապես այնքան էլ համարժեք չէ, որքան նախորդը¹⁴:

3. Աճապել-ը, որը կա «Բառգրքի» հին տպագրության (Ալիկոռնա, 1698, էջ 12) մեջ, Հ. Ամայյանը քննական բնագրի կազմելիս դրել է տողատակում՝ նշելով, որ այն ձեռագրերից երկուսում է հանդիպում, իսկ վերևում՝ աճապարել «յառաջել, կամ հասանել», որ որևէ ձեռագրով չի վկայաբերվում, հավանաբար Հ. Աճառյանի հետևությունը, որն այնքան էլ համոզիչ չէ («Բառգիրք», 1975, էջ 13):

¹⁰ Հ. Աճառյանի նշվ. աշխ., էջ 127: «Բառգրքի» քննական բնագրի հղումները տալիս ենք շարադրանքի մեջ, մյուսները՝ տողատակին:

¹¹ Հ. Ամայյանի նշվ. աշխ. Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 176:

¹² Հ. Աճառյանի նշվ. աշխ., էջ 168-169:

¹³ И. Х. Д в о р е ц к и й. Древнегреческо-русский словарь, т. 1. М., 1958, с. 79, 749.

¹⁴ Գ. Ջահուկյանի նշվ. աշխ. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 38:

Հ. Աճառյանը չունի աճապել, այլ միայն աճապարել «շտապել, արտորալ, ճեպել», թեև բառահոդովածի առաջին մասի վերջում գրում է հետևյալը. «Նույն բայի աղավաղյալ ձևն էմ կարծում աճապել «հառաջել կամ հասանել» Բառ. երեմ., էջ 12»¹⁵:

Այս բառի ծագման, այլև աճապարել-ի հետ առնչության վերաբերյալ Ջահուկյանը չունի որևէ դիտարկում, թեև ունի աճ(ա)պ «զարմանք, զարմանալիք», որ դեռևս Հ. Հյուբշմանը ժամանակին համարել է փոխառություն արաբ. ʿajab (ʿajīb) ձևից¹⁶:

Կարելի է մտածել, որ տարբեր բառեր են աճապել և աճապարել, այսինքն՝ առաջինը երկրորդի աղավաղյալ ձևը չէ: Իսկ աճապել բայը, թերևս, կազմված է աճապ (<աջաբ) բառից՝ փոխառություն արաբ. ʿajab «(այստեղ) արդյոք, իրոք» ձևից (հմմտ. բրբռ. աջեբ «զարմանք, ապշություն. չտեսնված» - Մուշ, Ալաշկերտ և այլն)¹⁷:

4. Անդուրն «թարգմանի ամբարտաւանութիւնք» («Բառգիրք», 1975, էջ 61): Աճառյանը նշում է, որ այն ունի միայն Եր. Մեղրեցին՝ չտալով բառի որևէ ստուգաբանություն¹⁸: Գ. Ջահուկյանն ավելացնում է հետևյալը. «Անդուրնք «ամբարտավանություններ» (ԲՀ. իմա՝ «Բառգիրք հայոց» – Վ. Հ.): Թերևս փոխառություն կամ օտարալեզու բառ, որովհետև գրված է «թարգմանի ամբարտաւանութիւնք»: Մակայն որոշ ձեռագրերում գրված է անդուրն, որ թերևս յանդուրն բառի սխալագրությունն է»¹⁹:

Կարծում ենք, որ այն չի կարելի շփոթել յանդուրն «անվախ, փչացած, վստահ, համարձակ» բառի հետ կամ կարծել, թե պիտի լինի վերջինիս աղավաղված մի ձևը, այսինքն՝ բառը համարել արդյունք սխալագրության, թեկուզ այն պատճառով, որ նախ՝ յանդուրն բառը ևս ունի բառարանը («Բառգիրք», 1975, էջ 224), երկրորդ՝ այբբենական կարգի համաձայն այն դրված է ճիշտ իր տեղում:

Կարելի է ենթադրել երկու կերպ. կա՛մ այն կապ ունի անդ «խորք, խորունկ (տեղ) արմատի հետ, մի արմատ, որ չենք գտնում, օրինակ, Աճառյանի «Արմատականում», թեև կա վերջինիս մյուս տարբերակը՝ ունջ «տակը, խորքը, հատակ (որից ընջովին, անունջ և այլն. հմմտ. նան անդունդ «ավելի քան խորը, անչափ խորը»)²⁰, կա՛մ էլ գործ ունենք փոխառյալ բառի հետ, որովհետև «Բառգրքում» այն, իրոք, բացատրվում է «թարգմանի» բառի գործածությամբ:

Մենք հակված ենք կարծելու, որ անդուրն բառը փոխառյալ է հուն. αναδύομαι (աորիստ ανεδύον) բառից, որն ունեք՝ 1) «(խորքից՝ ջրի տակից, լողալով՝ ջրի երես) դուրս գալ, բարձրանալ (մակերեսին)», 2) «հետ քաշվել (դեպի խորքը), ծածկ-

¹⁵ Հ. Աճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 138:

¹⁶ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 393, այլն՝ ն ու յ ն ի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 40-41:

¹⁷ Հմմտ. Ա. Ք ո չ ո յ ա ն. Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարան, Երևան, 1963, էջ 38: Ռ. Ղ ա զ ա թ յ ա ն, Հ. Ա վ է տ ի ս յ ա ն. Միջին հայերենի բառարան, հ. 1, Երևան, 1987, էջ 36:

¹⁸ Հ. Աճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., էջ 191: Ի դեպ՝ «Արմատականում» նշվում է անդուրնք ձևով, որը սխալ է, հավանաբար բառարանի վերահրատարակության մեջ տեղ գտած վրիպակ:

¹⁹ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 657:

²⁰ Հ. Աճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 604:

վել, թաքնվել», 3) «(մի կողմ քաշվելով) ազատվել, խույս տալ» և այլն իմաստները, և որը բավականին մոտ է բառարանում նշված «ամբարտավանություն(ներ)» իմաստին, մանավանդ, եթե նկատի ենք ունենում վերջինիս ոչ առարկայական, այլ իմացական կողմը, որը միանգամայն հնարավոր է²¹: Ավելին, նույն արմատից կա հուն. αναδύσις, έως «նահանջ, (որևէ բանից) հրաժարում, շեղում, փչացում, խորամանկություն», որը լիովին համարժեք է լինում Մեղրեցու նշած «ամբարտավանություն(ներ)» իմաստին:

5. Եկիտ «ծածուկ» բառի ճիշտ ձևն է համարվում ետեկ, որովհետև այն կա «առավել հին ձևագրերում» («Բառգիրք», 1975, էջ 86, 363): Միաժամանակ տողատակին նշվում է, որ ձևագրերից երկուսն ունեն ետեն: Ընդ որում այն համեմատվում է նաև «Բառգրքի» ետին բառի հետ, որն ունի նույն բացատրությունը՝ «ծածուկ», ավելացված՝ «կամ հաւ» (նույն տեղում, էջ 91): Հետագայում ևս Ամալյանը գրում է. «Ճիշտ է ետեկ բառը, որ վկայվում է հնագույն ձևագրերով (№ 4149 և այլն): Հմմտ. Ետին»²²:

Այս բառը Աճառյանը բերում է հետևյալ կերպ. «Եկիտ «ծածուկ». ունի միայն Բառ. երեւ., էջ 84»²³: Այնուհետև, թեև խոսելով ետեկնել «ծնիլ» բառի մասին, ոչ անկախ Լորայր Բուզանդացուց, որ բառը համարում է փոխառյալ հուն. έτεκε(ν) «ծնավ», τίκτο («ծնանիլ») բայից, նշում է, որ այն ունի հին գործածություն (Գր. Մագիստրոս), այլն «Հին բռ.=Բառ. երեւ., էջ 90 ունին ետիկէն «ծնաւ»²⁴, սակայն որևէ կապ չի տեսնում եկիտ և ետեկնել բառերի միջև: Գ. Ջահուկյանը համարում է «անստույգ բառ՝ թերևս առնված աստվածաշնչային հատուկ անուններից մեկի մեկնությունից»²⁵:

Կարծում ենք, որ եկիտ բառը ծագում է հուն. τικτω «ծնել, առաջ բերել. արտադրել» բայի աորիստի έτεκον ձևից, որն ունի տարբերակված իմաստներ՝ կապված կենդանական աշխարհի վերարտադրության անվանման տարբերությունների հետ (հմմտ. «աշխարհ բերել, ծնունդ տալ», «ծնել. զավակ ունենալ», «թուխս նստել», «ձագ հանել՝ ունենալ», «ձվադրել», ձկնկիրթ թողնել՝ թափել» և այլն)²⁶:

Նկատենք, որ հայ. որոշ բարբառներում այս համատեքստում գործածվում է նաև «ծածկել» (էվֆեմիզմով ասված, այսինքն՝ «սերս տալ. բեղմնավորել»), որն անշուշտ ծածուկ բառից է, ուստի այն իմաստով լիովին համապատասխանում է ետեկ բառին տրված բացատրությանը:

6. Հայ. Եմման «եղեալ յումեքէ» (=«եղած ինչ-որ մեկից՝ մեկի կողմից») («Բառգիրք», 1975, էջ 89): Տողատակին, նկատի ունենալով ձևագրերից երկուսը, տրվում է գրչագրական տարբերակ՝ եմմանու, իսկ մեկում՝ յու, փխ. յումեքէ: Իսկ ծանոթագրության մեջ նշվում է, որ «այդ բառահոդվածը չկա մնացած բոլոր ձևագրերում: Հմմտ. Արմ., Եմմանու («Բառգիրք», 1975, էջ 364)»: Եմմանու ձևն ունի

²¹ И. Х. Д в о р е ц к и й. Նշվ. աշխ., էջ 115 և 140:

²² Հ. Ա մ ա լ յ ա ն. Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 203-204:

²³ Հ. Ա մ ա լ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 13:

²⁴ Նույն տեղում, էջ 33:

²⁵ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 212:

²⁶ И. Х. Д в о р е ц к и й. Древнегреческо-русский словарь, т. 2, М., 1958, с. 1627.

Աճառյանը՝ հավանաբար հիմք ընդունելով «Բառգիրքի» հին հրատարակությունը²⁷:

«Բառգիրք հայոցում» կան նաև եմման բառին իմաստով բավականին մոտ եմաթ «անտիոք, սպասաւոր, բարկացումն», եմանուն «հաւատացեալ», եմերոն «խորհուրդ», եմանովթ «հաւատ» և եմաւուս «երկնչող խորհրդոյ» բառահոդովածները²⁸, որոնք կարող են ծագումով նույն աղբյուրից լինել, ինչպէս նաև միավորվել բառիմաստային (թեմատիկ) միևնույն խմբի մեջ՝ կապված հավատքի, վերջինիս խորհրդի, նրա նկատմամբ հնարավոր երկյուղի, հարուցած վախի հետ և այլն: Եթե սա կարելի է հավանական համարել, ապա անհնարին չէ, որ եմման բառի «եղեալ յումեքէ» բացատրությունը հասկացվի «գերագույն ուժից՝ հավատք ներշնչողից եղած, հավատքով տարված» իմաստով՝ փոխանվանաբար ասված:

Այնուհետև, եսերոն «խորհուրդ» բառի համար տրվում է հղում եմերոն բառին. «Եսերոն. խորհուրդ: Տե՛ս Եմերոն: Թվում է, թե եսերոն և եմերոն ծագում են եսերոն բառից»²⁹: Եվ եթե այս եսերոն («քաղաք է քահանայից») բառը գուցադրելի է վերը մեր համեմատած եմաթ («անտիոք, սպասաւոր, բարկացումն») բառի հետ, ապա վերջինիս «անտիոք» (իմա՝ Անտիոք քաղաքանուն) և եսերոն բառի «քաղաք է քահանայից» բացատրությունը դառնում է միանգամայն ստույգ և հավաստի:

Ջահուկյանը գրում է. «Անստույգ բառ: Հավանաբար առնված Աստվածաշնչի մի հատուկ անվան մեկնությունից (Ես(մ)ա՛ն, որ, սակայն, այլ կերպ է մեկնվում)»³⁰:

Մենք հակված ենք կարծելու, որ հայ. եմմանու բառը փոխառություն է հուն. έμ-μάνωρ «խելացնոր, խելքը թոցրած. մոլեգնած, կատաղ ած», έμ-μάνώρ (գերադր. աստիճան՝ έμ-μάνέρστατα) «խենթորեն, խելացնոր կերպով. մոլեգնաբար, գազազած»³¹:

7. Եսեն «դարան, լուրթին, աղբյուր» («Բառգիրք», 1975, էջ 91): Այս բառի կապակցությամբ Աճառյանն առանց որևէ մեկնաբանման գրում է. «Եսեն՝ դարան կամ լուրթին կամ աղբյուր», ունի միայն Բառ. երեւմ., էջ 89»³²: Գրեթե նույնը հանդիպում ենք Ջահուկյանի բառարանում. «Անստույգ բառ: Ծագումն անհայտ է»³³:

Ելնելով բառահոդովածի մեջ «աղբյուր» բացատրությունից, որին կից նշվում են նաև «դարան, լուրթուն», կարելի է ենթադրել, թե վերջիններս աղբյուրի «թաքուն, դեռ չբխած վիճակ» են նշանակում: Եվ եթե այդպէս ենթադրելն ընդունելի է, ապա նաև հավանական ենք համարում Եսեն բառի (նախնական ձևը՝ *էքսեն ?) փոխառյալ լինելը՝ հուն. έξήν (սահմ. եղ. անցյ. անկատ. եզ. 3-րդ դ. έξειμι բայի) «բխում է, հորդում է, դուրս է գալիս՝ տալիս», հմմտ. նաև հուն. έξειμι (< εμι) (սահմ. եղ. ա-

²⁷ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., հ. 1, էջ 26:

²⁸ Քննական բնագրում կա նաև եմերոն բառը, որ հղվում է եսերոն «խորհուրդ» բառին, որն այլ բնագրերում անհայտ է (Բառգիրք հայոց, էջ 206):

²⁹ Հ. Ա մ ա լ յ ա ն. Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 206:

³⁰ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 216:

³¹ И. X. Д в о р е ц к и й. Նշվ. աշխ., հ. 2, էջ 33:

³² Հ. Ա ճ ա ռ յ ա ն. նշվ. աշխ., հ. 1, էջ 26:

³³ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 218:

պառնի՝ էξέρχομαι) «դուրս գալ, տարածվել, ձգվել», «մոտ գալ, մոտենալ», «տարածվել, ցրվել», «հորդել, լցվել, թափվել» և այլն³⁴:

8. Ետրադիճ «անառակ. անբարո (աղջիկ)» («Բառգիրք», 1975, էջ 91): Քննական բնագրի ծանոթագրության մեջ ասվում է, որ «Այս ձևով բառահոդվածը կա հնագույն (№№ 4149, 8106 և այլ), ինչպես նաև հետագա (№№ 450, 535 և այլ) ձեռագրերում: Հմնտ. Արմ., Ետր» («Բառգիրք», 1975, էջ 364)³⁵:

Հայ. ետր, ետրոնին բառերի ստուգաբանությունը պատկանում է Գ. Ջահուկյանին, որը ժամանակին ընդունվել է նաև Հ. Աճառյանի կողմից³⁶: Ավելացնենք, որ ետրադիճ բառի դեպքում ևս ունենք ետր (հուն. έταίρ, այլև էպ. έταίρη, իոն. έταίρη «ընկերուհի, սիրուհի», «հետերա», «անառակ») բառը, որը բաղադրվել է ադիճ (>*ադիճ-իկ) բառի հետ, որն էլ նախկինում նման հավաստիությամբ որևէ քննության չի առնվել³⁷:

9. Իրայոն «տեսիլ» («Բառգիրք», 1975, էջ 132): Աճառյանի «Արմատական բառաբանում» նշվում է հետևյալ ձևով. «Իրայոն. ունի միայն Բառ երեւ., էջ 130»³⁸, որը քննական բնագրում ուղղված է իրայոն ձևով: Ջահուկյանն այս բառին անդրադառնում է հետևյալ կերպ. «Իրայոն (իրայոն) «տեսիլ»: Ծագումն անհայտ է»³⁹:

Բառը, ամենայն հավանականությամբ, փոխառյալ է հուն. (ερά, (հոն.) یرά τά 1) «զոհաբերման սուրբ. զոհաբերում, զոհ», 2) «զոհաբերման անասունի ներքինը (որով քրմերը գուշակում էին), այլ կերպ՝ «խորհրդանիշ, սուրբ նշան», 3) «սրբազան ծես» ձևից⁴⁰:

Ըստ այսմ՝ իրայոն բառի յ-ն հայերեն ա-ից հետո է հնչվել և գրվել, համաձայն հայտնի կանոնի, իսկ -ոն մասնիկը հունարեն ածանց կամ վերջավորությունն պիտի եղած լինի:

10. Ռաքամ «ընթացք» («Բառգիրք», 1975, էջ 280): Քննական բնագրի տողատակին չի տրվում որևէ տարրնթերցում, իսկ ծանոթագրության մեջ նշում է, որ «Բառք էբրայականում» ռասքամ է (նույն տեղում, էջ 427): Ըստ Աճառյանի՝ ունի միայն Երեմիա Մեղրեցին, որը և չի մեկնաբանվում կամ ստուգաբանվում⁴¹: Գ. Ջահուկյանը գրում է. «Ռաքամ «ընթացք» (ԲՀ. իմա՝ «Բառգիրք հայոց» – Վ. Հ.): Ծագումն անհայտ է»⁴²:

³⁴ И. X. Д в о р е ц к и й. Նշվ. աշխ., հ. 1, էջ 570:

³⁵ Հ. Ա մ ա լ յ ա ն. Հայ միջնադարյան բառարանագրությունը, էջ 206:

³⁶ Տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ստուգաբանություններ.– ՊԲՀ, 1963, № 4, էջ 85:

³⁷ Ետրադիճ բառի երկրորդ բաղադրիչի մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Հ ա մ բ ա ռ ձ - ն ի մ յ ա ն. Հայերեն աղջիկ բառի ստուգաբանությունը.– ՊԲՀ, 1997, № 2, էջ 149-152, ն ու լ յ ի՝ Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, պրակ 1, Երևան, 1998, էջ 29-33:

³⁸ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 143:

³⁹ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 287:

⁴⁰ И. X. Д в о р е ц к и й. Նշվ. աշխ., հ. 1, էջ 813:

⁴¹ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Նշվ. աշխ., հ. II, էջ 250:

⁴² Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 657:

Մարծնով ենք, որ բարը փոխառություն է արար. raġam (<էրր. raqam) «ընթացք», «հրահանագիր, (թագավորական) հրովարտակ, (պաշտոնական) գրություն»⁴³:

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕЧАНИЯ О НЕКОТОРЫХ СЛОВАХ
«АРМЯНСКОГО СЛОВАРЯ» ЕРЕМИИ МЕГРЕЦИ

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Р е з ю м е

В «Армянском словаре» Еремии Мегреци (XVII в.), по оценке Р. Ачаряна, есть еще «сомнительные и недостоверные» слова, происхождение которых неизвестно, и эти слова не подвергаются лексикологическому и этимологическому анализу.

Между тем, можно провести лексический анализ и выявить этимологию следующих армянских слов: 1) aġandump «сумасшествие», (*перен.*) «изменение, другое состояние» < и.—е.*alyo- (*alio-), ср. греч. ἄλλος «другой, прочий», лат. alius «другой, прочий» гот. aljis «другой, иной», 2) alip^catos «попечитель; куратор» < греч. (*гор.*) ἀλίβατος, а также ἡλίβατος (< ἡλιβάτος «легко преодолимый») «высокий, крутой; высокоствольный; глубокий; бездонный», 3) aġapel «удивляться; сомневаться; порицать, осуждать» < араб. aġab «разве, неужели; удивительно», 4) anduk^cn «высокомерность; надменность» < греч. ἀναδύομαι (аор. ἀνέδύν) «выходить (из глубины)», 5) ekit «скрытый, скрыто; рожала, родила; возбудил, внес» < греч. ἔτεκον (аор. форма глагола τίκτω «рож(д)ать, родить; производить»), 6) eġann//eġanni < греч. ἐμ-μάνης «сумасшедший, безумный; бешеный», ἐμ-μάως (превосх. ст. ἐμμάνέρσστα) «безумно; бешено, неистово», 7) esen (*ēk^csen?) «укрытие, тайник; тишина; ключ, источник» < греч. ἐξήν (< ἐξεῖμι—) «вытекает, прибывает», ср. греч. ἐξεῖμι— (< ἐῖμι, ἐξέρχομαι) «выйти, тянуться», «приближаться», «разливаться» и т. д., 8) etraġiġ «безнравственная, развратная (девушка)» < греч. ἔταρ, (*эл.*) ἔταρη, (*ион.*) ἔταρη «подруга; любовница», 9) irayon «привидение; призрак, символ» < греч. ἱέρα, (*ион.*) ἱρά τά «дань (жертвоания)», «жертвоание, жертва», «внутренность животного (которым жрецы гадали)», т. е. «символ; святой знак», «святой обряд», 10) rak^cam «ход, движение; поступь» < араб. raġam (<евр. raqam) «поступь, указ, послание; (официальная) бумага».

⁴³ Հմմտ. Ջամբր, շարագրեցեալ ի Մ ի ս է օ ն է Երևանի ց ի ն յ, Վաղարշապատ, 1873 էջ 20, ծան. 2, տե՛ս նաև՝ Մ ի ս է ն ն ի յ ա թ ն ղ ի ի ն ու Երևանի ց ի ն յ ղ ի. Ջամբր, Երևան, 2003, էջ 29, 413:

ETYMOLOGICAL NOTES ON SOME WORDS
IN “ARMENIAN DICTIONARY” BY YEREMIA MEGHRETSI

VAZGEN HAMBARDZUMYAN

S u m m a r y

In “Armenian Dictionary” by Yeremia Meghretsi (17th c. A. D.), according to evaluation of H. Adjaryan, there are also “doubtful and wrong” words, that is why they are not subjects of lexicological and etymological analysis.

In this article the following Armenian words are analysed and etymologized:

1) ałandumn ”madness; lunacy”, (*met.*) “other state” < IE *alyo- (*alio-), cf. Greek άλλος “other, another”, Lat. alius “id.”, Goth. aljis “id.”, Old Irl. aile “id.”, Ir. “id.” etc., 2) ałip^oatos “trustee; to take care (of)” < Greek (Dor.) ἀλίβατος, also ἡλίβατος (< ἡλιβάτος “easily to overcome”) “high, abrupt; cloud-capped, profound”, 3) ačapel “to be astonished, to be perplexed, to scold, to accuse ” < Arab. aġab “really, whether; astonishing”, 4) anduk^on “arrogance”, 5) ekit (< *etek) “secret(ly): i. e. “born; to irritate” < Greek έτεκον (Aor.) (< τικτω) “to give birth (to)” etc., 6) emann//emannu “done by somebody” < Greek έμ-μάνής (Adj.) “absent-minded; furious”, έμ-μάως (superlat. έμμάνέρστατα), έμ-μάνώς (Adv.) (superlat. έμ-μάνέρστατα) “furiously” etc., 7) esen (*ēk^osen?) “ambush, silence; source” < Greek έξήν (< έξειμι-) “to come out, to spread”, cf. Greek έξειμι- (< έμι, έξέρχομαι) “to come out, to spread, to tighten”, “to approach”, “to spread, to dissipate”, “to exhort” etc., 8) etralič “immoral, vicious (maiden)” < Greek έταιρ, (epic. έτάρη, (Ion.) έταιρη “girl-friend; mistress”, 9) irayon “vision” < Greek ίερα, (Ion.) ίρά τά “tribute (for sacrifice). sacrifice, victim”, “organ internal of animals (with curms were predicting)”, i.e. “symbol, holy signum”, 10) rak^oam “course; order” <apađ. rałam (< ebr. raqam) “command, order; edict, note (official)”.